

09 նոյեմբերի, 2022

Զբաղվածության ապահովում ունակությունների զարգացման միջոցով. մեկնարկել է ԳՏՏԿ-ի և HSBC Հայաստանի համատեղ ծրագիրը

Գյումրիի Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոնը (ԳՏՏԿ) «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ HSBC Հայաստան/Բանկ) ֆինանսական աջակցությամբ մեկնարկում է ծրագիր, որն ուղղված է Տավուշի մարզի երիտասարդների զբաղվածության ապահովմանը:

Նախաձեռնությամբ նախատեսվում է անցկացնել ծրագրավորման, ինչպես նաև փափուկ հմտությունների դասընթացներ մարզի երիտասարդների համար: Մասնավորապես, 42 շախառու հնարավորություն կստանա մասնակցելու 6-ամսյա անվճար դասընթացների հետևյալ թեմաներով՝ «Համակարգչային տեխնիկա/հիմնական հմտություններ», «Վեբ ծրագրավորում (HTML / CSS / JavaScript)», «Սոցիալական մեդիա մարքեթինգ (SMM)» և «Գրաֆիկ դիզայն (Graphic Design)»: Ծրագրի շտրիկով մասնակիցները ձեռք կբերեն նաև նոր ծանոթություններ SS ընկերությունների և ԳՏՏԿ գործընկեր կազմակերպությունների շրջանում՝ ընդլայնելով հետագայում աշխատանք գտնելու իրենց հնարավորությունները:

ԳՏՏԿ տնօրեն Ամալյա Եղոյանի խոսքով՝ Իջևանում այս պահին գործող SS ընկերություններն ունեն մասնագետների կարիք, իսկ այս ծրագիրը կարող է լրացնել այդ բացը՝ պոտենցիալ մասնագետներ պատրաստելով այդ ընկերությունների համար:

«Միևնույն ժամանակ, պետք չէ անտեսել հեռակա աշխատանքի անցնելու հնարավորությունները, որոնք այնքան ակտուալ են դարձել համավարակից հետո», - նշել է նա:

Ծրագրի շրջանակում HSBC Հայաստանի աշխատակիցները կվարեն նաև ֆինանսական և բանկային գրագիտության դասեր մասնակիցների համար:

«Ծրագրի ընթացքում ձեռք բերված գիտելիքները ճանապարհ կհարթեն Տավուշի մարզի երիտասարդների համար և կօգնեն նրանց աշխատանք գտնելու հարցում: Նախատեսվում է, որ նախագծի ավարտից հետո շրջանավարտների մեծամասնությունը կապահովվի աշխատանքով, ինչը կնպաստի մարզում աշխատունակության բարձրացմանը, հետևաբար նաև՝ կայուն տնտեսական զարգացմանը», - հավելեց HSBC Հայաստանի գլխավոր գործադիր տնօրեն Իրինա Սեյլանյանը:

ԳՏՏԿ

ԳՏՏԿ-ն հիմնադրվել 2005 թվականին Հայ Օգնության Ֆոնդի (<https://www.farusa.org>) կողմից և ֆինանսավորմամբ, նպատակը մեկն էր՝ Գյումրին աղետի գոտուց վերածել տեխնոլոգիապես հզոր քաղաքի:

ԳՏՏԿ-ի Կրթական ծրագրերը հիմնաքարային են հանդիսացել Հայաստանում և Արցախում, որտեղ և սկսվել են տեխնոլոգիական զարգացումները: Բացի տեխնոլոգիական կրթական ծրագրերից, ԳՏՏԿ-ն համագործակցում է միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ՝ խթանելու թվային հմտություններն ու լուծումները:

Իր գործունեության 17 տարիների ընթացքում ԳՏՏԿ-ն հայաստանյան տեխնոլոգիական շուկա է հանել 5000 տաղանդավոր մասնագետների:

ԳՏՏԿ-ն այժմ գործում է Հայաստանի բոլոր մարզերում՝ նպատակ ունենալով կրկնօրինակել հաջողված մոդելը ի շահ տարածաշրջանի:

HSBC Խումբ

HSBC Holdings plc-ն՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբը ծառայություններ է տրամադրում 63 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2022թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել են 2,985 միլիարդ ԱՄՆ դոլար:

HSBC Հայաստան

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հիմնադրվել է 1996թ.-ին: Բանկը Էյչ-Էս-Բի-Սի Խմբին ամբողջությամբ պատկանող դուստր ընկերությունն է: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30 000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 6 գրասենյակի և մոտ 310 աշխատակցի միջոցով: 2021 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 261 միլիարդ ՀՀ դրամ՝ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ ՓԲԸ-Սի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկերը: Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: